ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» հուլիսի 2024թ. № 658

ՄԱՆՎԵԼ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,174 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրում գտնվող Մանվել Արշալույսի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 0,174 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 86,60 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան տրամադրված «Լոռու մարզ, Շիրակամուտի համայնք, թիվ 30/1» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2114806 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 069999HVXEH2) և Մանվել Արշալույսի Սիմոնյանի (ծնված՝ 05.07.1954թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրում գտնվող Մանվել Արշալույսի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 0,174 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 86,60 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան առկա «Լոռու մարզ, Շիրակամուտի համայնք, թիվ 30/1» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, գյուղ Շիրակամուտ, 14-րդ փողոց, 38 բնակելի տուն» հասցեով (փոստային դասիչը՝ 1820):

2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ.հուլիսի 1
ք.Սպիտակ